ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

02.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/22

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 18.07.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/22 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 18.07.2017թ. բողոքով հայտնել է, որ «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 12.07.2017թ. թիվ 3 որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պատճառով:

Այնուհետև հարկային տեսչության հետ կատարված ճշգրտման արդյունքում պարզվել է, որ 21.06.2017թ. դրությամբ Ընկերության հարկային պարտավորությունները կազմել են 32 121 ՀՀ դրամ, որը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության, ինչպես նաև «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Կատարված ճշգրտման մասին Ընկերությունը տեղեկացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, սակայն դրական արդյունք չի եղել:

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է Ընկերության մասնակցության իրավունքը և Ընկերության հայտը մերժվել է ոչ իրավաչափ:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետը, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ մասերը, 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 7-րդ մասի 1-ին կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-50-րդ, 59-64-րդ, 66-րդ կետերը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի պահանջները՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու մասին որոշումը փոխել և պարտավորեցնել ընդունելու «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշում, ինչպես նաև փոփոխել գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 20-րդ, 21-րդ և 44-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.07.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 21.07.2017թ. թիվ 04/912811-17 գրությամբ Խորհրդին ներկայացրել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 21.07.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, արձանագրելով որ Ընկերությունը ունի 173 253 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարավորություն, մերժել է ընկերության հայտը: Պատվիրատուի ներկայացուցիչը նշել է նաև, որ Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու համար սահմանված անգործության ժամկետը լրացել է 17.07.2017թ.:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2017/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ն 21.06.2017թ. հայտ է ներկայացրել:

2. ***«ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին որոշման վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է <u>12.07.2017թ. և սահմանվել է անգործության ժամկետ՝</u>***

հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը՝ 13.07.2017-17.07.2017թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. ***«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ԳԲԽ-ԱՄ-2017/22 բողոքը ներկայացվել է 18.07.2017թ.:***

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի 18.07.2017թ. բողոքը, «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Միևնույն ժամանակ Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:*** Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:***

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, համաձայն www.gnumner.am համացանցային կայքում առկա տեղեկատվության, հրապարակվել է **12.07.2017թ.**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:***

«ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման վեաբերյալ հայտարարության համաձայն՝ պայմանագիր կնքելու անգործության ժամկետ է սահմանվել նշված հայտարարությունը հրապարակվելու օրվան (12.07.2017թ.) հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամակահատվածը, այն է՝ ***13.07.2017-17.07.2017թթ.*** ներառյալ:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու անգործության վերջնաժամկետը սահմանվել է ***17.07.2017թ.*** ներառյալ, մինչդեռ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոքը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է ***18.07.2017թ.,*** այսինքն անգործության ժամկետը լրանալուց հետո: Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ «Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 18.07.2017թ. բողոքը ներկայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջների խախտմամբ, ուստի այն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պապ և Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 18.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**